ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2017 թվականի N 89-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ջովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Արովյանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Հունանյան Կարեն*** - աշխատանքային խմբի ղեկավար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

2) ***Վարդանյան Արմեն*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

3) ***Բաղդասարյան Մեղա*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

4) ***Թադևոսյան Հասմիկ*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ *յոթնօրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մայիսի 06
ք. Հրազդան